ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/64

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Գրիման» ՍՊԸ-ի տնօրեն՝

Մ. Գրիգորյանի

Քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի մանկապարտեզներում հակահրդեհային համակարգերի ձեռքբերման և տեղադրման նպատակով հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Գրիման» ՍՊԸ-ի կողմից 29.08.2019թ. ներկայացված և 30.08.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/64 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Գրիման» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գրիման» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 29.08.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանը 2019թ. հուլիսի 26-ի թիվ 2 որոշմամբ հայտարարել էր ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/3 ծածկագրով հրատապ բաց մրցույթ՝ Երևան քաղաքի 96 մանկապարտեզներում հակահրդեհային համակարգերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների կատարման համար, ընդ որում բոլոր 96 մանկապարտեզների համար մրցույթն անցկացվելու էր մեկ լոտով:

Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջներից էին.

Լիցենզիաներից-«Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիայի Կապի ոլորտի ներդիրը,

տեխնիկական միջոցների առկայությունից - ցանկացած տիպի մեկ ինքնաթափ մեքենան:

Տեխնիկական բնութագիրը կազմված էր բոլոր 96 մանկապարտեզների համար ընդհանուր մեկ սարքավորումների ցանկով, այն է.

Ընդունող-ղեկավարող սարք – 96 հատ,

Երկրորդային սնուցման աղբյուր – 192 հատ,

Հրդեհի ծխային տվիչներ – 11 520 հատ,

Լուսաձայնային ազդարարներ – 800 հատ,

Հրդեհի ձեռքի տվիչներ – 2 000 հատ,

Շլեյֆի մեկուսիչներ – 300 հատ,

Ընդունող-հսկող սարք ՏՄ վերահսկիչով – 200 հատ,

Մարտկոցներ էլեկտրական - 384 հատ,

Մալուխ – 200 000 մ:

Տեխնիկական բնութագրի պահանջներից էին նաև աշխատանքների իրականացումը ըստ շինարարական նորմերի և կանոնների, որակի ապահովումը և ծածկված աշխատանքների ակտերի կազմումը:

Մեկ լոտով իրականացվելիք մրցույթի վերոգրյալ աշխատանքների համար նախատեսված էր 147.5 մլն. դրամ:

26.07.2019թ. «ԼՈԿԱՏՈՐ» ՍՊԸ-ի հարցմանը՝ աշխատանքների կատարման համար նախագծի և 200 հատ ՏՄ վերահսկող ընդունող-հսկող սարքերի մասին, քաղաքապետարանը պարոն Շաքարյանի ստորագրությամբ պատասխանում է, որ.

1. «Երևան քաղաքի մանկապարտեզներում հակահրդեհային համակարգերի տեղադրման աշխատանքների համար շինարարական թույլտվություն չի պահանջվում, քանի որ նախատեսվում է իրականացնել համակարգերի ձեռք բերման և տեղադրման աշխատանքներ, ուստի նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն պահանջվում»,

2. հրավերում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Փոփոխված հրավերում արդեն ՏՄ վերահսկող ընդունող-հսկող սարքերի քանակը դառնում է 96 և տեխնիկական բնութագրում ավելանում է նոր նշում - «Գինը ներառում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության անցկացման ծախսերը»:

2019թ. օգոստոսի 12-ին նշանակված մրցույթը չի կայանում մասնակիցների բացակայության պատճառով:

Ընկերությունը հանդիպել է հրավերի կազմակերպիչների՝ քաղաքապետարանի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գ.Հարությունյանի և նրա տեղակալ Է. Շաքարյանի հետ և ներկայացրել է մրցույթի վերաբերյալ ներքոգրյալ հակափաստարկները նախագծերի, տեխնիկական բնութագրերի և մրցույթի պայմանների մասին:

1) Նախագծերի մասին.

Համաձայն ՀՀ Կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման, առանց շինթույլտվության և անհրաժեշտության դեպքում միայն նախահաշիվ կազմելով կարելի է իրականացնել այն ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, բարեկարգման և այլ շինարարական աշխատանքները, որոնք նշված են որոշմանը կից ցանկ 1-ում: Իսկ այնտեղ «13. Էլեկտրալուսավորում և կապ» կետի գ) ենթակետում նշված է – ծխահրդեհային տեղեկացման ավտոնոմ սարքերի տեղադրում: Ակնհայտ է, որ նախատեսվող աշխատանքները չեն վերաբերվում ավտոնոմ սարքերի տեղակայմանը:

Նույն որոշման ցանկ 3-ում նշված բարձր ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկում, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են պետական համալիր փորձաքննության, 4-1-ա) - ՀՀ տարածքում կարևորագույն նշանակության օբյեկտներ – հասարակական շենքեր և շինություններ ենթակետում կարդում ենք. «հանրակրթական դպրոցներ, նախադպրոցական ուսումնական հաստատություններ»:

Այսինքն, տվյալ աշխատանքների համար պետք է նախօրոք կազմվեին նախագծեր, անցնեին փորձաքննություն և հաստատվեին սահմանված կարգով և նոր ներկայացվեին իրականացման:

Եթե նախագծման աշխատանքները պետք է իրականացնի կապալառուն, ապա պարտադիր պայման պետք է հանդիսանար հետևյալ լիցենզիների միաժամանակյա առկայությունը.

Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների).

- Ոլորտը՝ կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր

Քաղաքաշինության բնակավառում շինարարության իրականացում.

- Ոլորտը՝ Կապի

2) Տեխնիկական բնութագրերի մասին

Տեխնիկական բնութագրերը կազմված են չհիմնավորված շատ բարձր տեխնիկական պահանջներով, մասնավորապես.

Ընդունող-ղեկավարող սարքը նախատեսված է 2x250=500 հատ հասցեական սարքերի հնարավորությամբ, այն դեպքում, երբ իրենց հաշվարկով մեկ մանկապարտեզում միջին հաշվով անհրաժեշտ է 11 520:96=120 տվիչ,

3000 մ հասցեալարի երկարությամբ, այն դեպքում որ 120 տվիչի դեպքում անհրաժեշտ է մոտ 1200-1500մ,

10 240 իրադարձությունների խորության հիշողությամբ, այն դեպքում, երբ հրդեհային համակարգերի համար այդքան մեծ խորությունը գործնականում անհրաժեշտ չէ, իրական

հրդեհը մեկ անգամ է լինում, իսկ անսարքությունները ենթակա են վերացման 1-2 կեղծ տագնապներից հետո,

Բացի հիմնական ընդունող-հսկող սարքից, նախատեսվել են նաև ՏՄ վերահսկող ընդունող-հսկող սարքեր, տագնապները ինքնաշխատ կերպով փոխանցման համար այն դեպքում, երբ կարելի է այդ գործառույթն միանգամից ապահովել համապատասխան մոդելի հիմնական ընդունող-հսկող սարքով,

Համակարգի տվիչների, սնուցման աղբյուրների, լուսաձայնային ազդարարների և մյուս սարքերի քանակները ոչնչով հիմնավորված չեն և ըստ մեզ՝ չափազանցված են,

Չեն նախատեսված խոհանոցային հարկաբաժիններում ջերմային, իսկ ջերմային հանգույցներում՝ գազի հայտնաբերման տվիչներ և այլն:

3) Մրցույթի պայմանների մասին

96 մանկապարտեզները հակահրդեհային համակարգերով սարքավորման գործընթացը մեկ լոտով և առանց նախագծանախահաշվային փաստաթղթերի իրականացումն ունի հետևյալ թերությունները.

Անորոշություններ և տարաձայնություններ են առաջանալու աշխատանքների հանձնման-ընդունման ժամանակ յուրաքանչյուր օբյեկտում՝ սարքերի անհրաժեշտ քանակությունից շատ կամ քիչ, տեղի ու նշանակության առումով հիմնավոր կամ չհիմնավորված դնելու և այլ հարցերի շուրջ, իսկ դա հանգեցնելու է և աշխատանքների ձգձգմանը համապատասխան իրավական հետևանքներով կատարողի համար

Խիստ սահմանափակում է հնարավոր մասնակիցների քանակը, ու նաև մրցույթին մասնակցելու Ընկերության իրավունքը, հետևաբար և մրցակցային գործընթացը,

Անորոշությունները կարող են հանգեցնել կոռուպցիոն պայմանավորվածությունների, եթե դրանք մինչ այժմ չկան:

Հանդիպումն ավարտվեց պայմանավորվածությամբ, որ Ընկերությունը կառաջարկի ավելի ճկուն և իրատեսական տեխնիկական բնութագիր, ինչը մենք ուղարկեցինք էլ.փոստով:

09.08.2019թ. մամուլում հրապարակվեց տեղեկություն այն մասին, որ այդ օրը ավագանու նիստին Երևանի առաջին փոխքաղաքապետ Հրաչյա Սարգսյանը ասել է, որ

պատրաստ են 21 մանկապարտեզների նորոգման նախագծերը և մինչև դեկտեմբեր կկարողանան սկսել 6 մանկապարտեզի նորոգում, մնացածը՝ հաջորդ տարի:

Օբյեկտներում հակահրդեհային և այլ անվտանգության համակարգեր տեղակայող ցանկացած մասնագետ կհաստատի, որ անվտանգության համակարգերի մալուխային ցանցը կարող է իրականացվել հիմնական շինարարական աշխատանքների հետ միայն այն դեպքում, երբ այն տեղակայվում է պատերի և միջհարկային ծածկերի վրա՝ ակոսներում: Իսկ վերջնական սարքավորումն ու կարգաբերումը կատարվում է շինարարական հարդարման աշխատանքների ավարտից հետո: Եվ այդ պատճառով է, որ նույնիսկ շինարարական նորոգման աշխատանքների ընթացքում արդեն եղած համակարգերն ուղղակի փչանում են կեղտ ու փոշուց և ենթակա են փոխարինման:

Այսինքն, մոտակա ամիսներին և հաջորդ տարի Երևան քաղաքի համայնքային բյուջեն կորցնելու է մոտ 38.2 մլն.դրամ քաղաքապետարանի ստորաբաժանումների անհամաձայնեցված աշխատանքների և սխալ պլանավորման պատճառով:

Այս տեղեկությունը SMS-ով փոխանցվել է վարչության պետի տեղակալ պարոն Շաքարյանին:

Ընկերությանը բանավոր հավաստիացրել են, որ բոլոր մանկապարտեզների համար անվճար կնախագծվեն համակարգեր ու նոր մրցույթի հրավերքում հաշվի կառնվեն Ընկերության նկատառումները:

Այսպիսով քաղաքապետարանը, հանձինս շինարարության և բարեկարգման վարչության պետ Գ.Հարությունյանի և նրա տեղակալ Է.Շաքարյանի, ուներ անհրաժեշտ թե ժամանակը և թե ինֆորմացիան նոր, ավելի «կենսունակ» մրցույթ հայտարարելու համար, բայց անսպասելիորեն 2019 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1 որոշմամբ հայտարարվում է նոր մրցույթ ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7 ծածկագրով, որում.

Նորից բոլոր մանկապարտեզները ներառվում են 1 լոտում,

Անփոփոխ են լիցենզիաների և ինքնաթափ ավտոմեքենայի պահանջները,

Աշխատանքային ռեսուրսներ բաժնում ավելացվում են 3 ճարտարագետի և 20 մոնտաժողների առկայության պահանջներ:

Փոխվել է մանկապարտեզների, և դրանց համապատասխան ընդունողիսկող սարքերի քանակը՝ 95 հատ ու նաև.

Հրդեհի ծխային տվիչները՝ 8 318 հատ,

Երկրորդային քլ.սնուցման պահուստային աղբյուրները՝ 95 հատ,

Լուսաձայնային ազդարարները՝ 1 128 հատ,

Հրդեհի ձեռքի տվիչները՝ 1 205 հատ,

Շլեյֆի մեկուսիչները՝ 277 հատ,

Սնուցման էլ.մարտկոցները՝ 95 հատ,

Հրակայուն մալուխը՝ 92 290մ:

Ավելացել են հասցեային ռելեային մոդուլներ – 95 հատ:

Բացի դա նորից անտեսվում է նախագծերի առկայության կամ անհրաժեշտության հարցը.

Հրավերում հանվել է «Գինը ներառում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության անցկացման ծախսերը» արտահայտությունը», և ընդհանրապես - հրավերում նախագծի մասին խոսվում է 3 անգամ.

«2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է

հետևյալ կարգով՝ ….Ճանապարհաշինարարական աշխատանքների, ներառյալ դրանց

իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման գնումների դեպքում…»

Մյուս 2 դեպքերում՝ անիմաստ, քանի որ նախագիծ կամ դրա պահանջը չկա.

…նախագծին և ծավալաթերթին համապատասխան…

4.5 … նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում …

Այս անգամ Ընկերությունը հարցում կատարեց ճշտելու համար նախագծերի առկայությունը:

Պատասխանը նույնն էր – ոչ նախագիծ, ոչ էլ նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն պահանջվում:

Ընկերությունը հաշվել է նաև առաջին մրցույթի գինը նրանում հայտարարված սարքերի քանակով և նոր մրցույթում նշված սարքերի միավոր գներով: Այն կազմեց 235,2 մլն. դրամ:

Այս բոլորը ապացույց է այն փաստի, որ մրցույթն անցկացվում է ցածր մասնագիտական խորհրդատվության հիման վրա, հապշտապ, առանց նախագծանախահաշվային փաստաթղթերի, ոտքի վրա աչքաչափով կատարված հաշվարկներով և չմշակված, ինչ որ ճանապարհաշինարարական աշխատանքների համար կազմած պայմանագրի նախագծով:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված բողոքով խնդրել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին՝

1. չկայացած հայտարարել «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգը:
2. նոր մրցույթ կազմակերպելիս.

- հաշվի առնել գործող քաղաքաշինական նորմերը և պատվիրել նախագծեր ամեն մանկապարտեզի կամ գոնե տիպային մանկապարտեզների խմբի համար,
- աշխատանքներն անպայման համաձայնեցնել մանկապարտեզների նորոգման աշխատանքների ժամանակացույցի հետ,
- մրցույթը հայտարարել ամեն մանկապարտեզի համար առանձին լոտով, ինչը կերաշխավորի մրցույթին մասնակցելու փոքր և միջին կազմակերպությունների, անհատ ձեռներեցների իրավունքը և կապահովի ազատ մրցակցություն:

«Գրիման» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.09.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.09.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի մանկապարտեզներում հակահրդեհային համակարգերի ձեռքբերման և տեղադրման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու՝ Ընթացակարգ):

2. www.gnumner.am տեղեկագրում առկա տեղեկատվության համաձայն՝ «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով մրցույթը 30.08.2019թ. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարվել է չկայացած:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գրիման» ՍՊԸ-ի կողմից 29.08.2019թ. ներկայացված բողոքը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ մասի համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

3. ***Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պարտադիրաբար տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:***

Այսպիսով ուսումնասիրելով «Գրիման» ՍՊԸ-ի կողմից 29.08.2019թ. ներկայացված բողոքի պահանջն, համաձայն որի՝ Ընկերությունը խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով հրատապ բաց մրցույթը հայտարարել չկայացած, արձանագրում եմ, որ www.gnumner.am տեղեկագրում առկա տեղեկատվության համաձայն՝ «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով մրցույթը 30.08.2019թ. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արդեն իսկ հայտարարվել է չկայացած:

Այսպիսով՝ փաստացի կարելի է արձանագրել, որ բողոքի պահանջն՝ «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով հրատապ բաց մրցույթը հայտարարել չկայացած, դարձել է առարկայազուրկ, քանի որ մինչ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բողոքը վարույթ ընդունելը, «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով հրատապ բաց մրցույթը արդեն իսկ հայտարարվել է չկայացած:

Ինչ վերաբերվում է բողոքով ներկայացված երկրորդ պահանջին, այն է՝ պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին նոր մրցույթ կազմակերպելիս.

- հաշվի առնել գործող քաղաքաշինական նորմերը և պատվիրել նախագծեր ամեն մանկապարտեզի կամ գոնե տիպային մանկապարտեզների խմբի համար,
- աշխատանքներն անպայման համաձայնեցնել մանկապարտեզների նորոգման աշխատանքների ժամանակացույցի հետ,
- մրցույթը հայտարարել ամեն մանկապարտեզի համար առանձին լոտով, ինչը կերաշխավորի մրցույթին մասնակցելու փոքր և միջին կազմակերպությունների, անհատ ձեռներեցների իրավունքը և կապահովի ազատ մրցակցություն, ապա սույն մասով անհրաժեշտ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ մասի համաձայն՝ գնման գործընթացը՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

1) գնումները համակարգողը.

2) պատասխանատու ստորաբաժանումը.

3) **<u>գնահատող հանձնաժողովը</u>**:

Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ **<u>պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝</u>**

1) հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը.

2) փոփոխություններ է կատարում հրավերում.

3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

4) բացում և գնահատում է հայտերը.

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Կարգի 26-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գնահատող հանձնաժողովի՝

1) կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով:

Այսպիսով՝ վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը հաշվի առնելով , օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու բավականին երկար գործընթաց, նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ **Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի <u>պատվիրատուի</u> և <u>գնահատող հանձնաժողովի</u> գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.**

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն իրավասու է կայացնելու համապատասխան որոշումներ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության

վերաբերյալ և արդեն իսկ ձևավորված (կազմակերպված) գնման ընթացակարգի շրջանակներում, ուստի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը տվյալ դեպքում իրավասու չէ կիրառելու Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված լիազորությունները մի մարմնի նկատմամբ և մի ընթացակարգի շրջանակներում, որը դեռևս ձևավորված չէ և գոյություն չունի: Այս տեսանկյունից հայտնում եմ, որ Ընթացակարգը չկայացած հայտարարելուց հետո Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մանկապարտեզներում հակահրդեհային համակարգերի ձեռքբերման և տեղադրման նոր մրցույթ դեռևս չի հայտարարվել և գնահատող հանձնաժողով չի ձևավորվել, որն էլ և հաստատում է հայտարարության և հրավերի տեքստը, ուստի Ընկերության կողմից բողոքով ներկայացված վերոհիշյալ պահանջը չի կարող բավարարվել, քանի որ նույն պահանջով ներկայացված գործողությունները տվյալ դեպքում դուրս են Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի լիազորությունների շրջանակից:

Ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «Գրիման» ՍՊԸ-ի կողմից 29.08.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գրիման» ՍՊԸ-ի կողմից 29.08.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**